



**ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՇԵՆՔԵՐԻ, ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆԹԱՑԻԿ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ  
ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՉԵՆՔԵՐԵՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ  
N ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԳՀԱՇՁԲ-22/1**

« 29 » « 12 » 2021թ.

ք. Երևան

ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայությունը, գործելով Հայաստանի Հանրապետության անունից, ի դեմս ծառայության գլխավոր քարտուղար՝ Արտակ Ղազարյանի, որը գործում է ծառայության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Սուբաշին» ՍՊ ընկերությունը, ի դեմս տնօրեն Ներսես Կոունկյանի, որը գործում է կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

**1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ**

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է **ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայության կարիքների համար շենքերի, շինությունների ընթացիկ վերանորոգման շինարարական աշխատանքների ձեռքբերման** (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

**2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

**2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝**

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից կատարվող աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը:

2.1.2 Եթե կատարվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող աշխատանք.

ա) Չընդունել աշխատանքը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի աշխատանքը պայմանագրին համապատասխանող աշխատանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը:

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու աշխատանքի համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը:

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) կատարված աշխատանքը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է աշխատանքի կատարման ժամկետը:

**2.2 Պատվիրատուն պարտավոր է՝**

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան կատարված աշխատանքի արդյունքը, իսկ աշխատանքի արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.3 Կատարողն իրավունք ունի՝**

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.4 Կատարողը պարտավոր է՝**

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել աշխատանքի կատարումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

### 3. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է [www.procurement.am](http://www.procurement.am) հասցեով գործող կայքի «էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է [www.procurement.am](http://www.procurement.am) հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և սույն պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

### 4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1 Պայմանագրով Կատարողի կատարման ենթակա աշխատանքի գինը կազմում է 69000000 (վաթսուհինը միլիոն) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

Աշխատանքի կատարման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն կատարված աշխատանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

Պայմանագրի շրջանակում կատարողական ակտերի դիմաց վճարումներն իրականացվում են հետևյալ բանաձևով՝ **ՎԳՏ=ՄԳ/ԼԳxԾԳՏxՕ**, որտեղ՝

**ՄԳ**-ն ընտրված մասնակցի առաջարկած ընդհանուր գինն է, ներառյալ ԱԱՀ-ն՝ 34983297 (երեսունչորս միլիոն ինը հարյուր ութսուներեք հազար երկու հարյուր իննըսունյոթ) ՀՀ դրամ:

**ԼԳ**-ն Պատվիրատուի կողմից սույն ընթացակարգի հրավերով հաստատված ԳՆԱՑՈՒՑԱԿԻ «ԸՆԴՀԱՆՈՒՐԸ (ՀՆԱՐԱԳՈՒՄԱՐ ԱՐԺԵՔ գլուխ 1 և գլուխ 2-ը միասին)» տողում նշված գինն է՝ 34983297 (երեսունչորս միլիոն ինը հարյուր ութսուներեք հազար երկու հարյուր իննըսունյոթ) ՀՀ դրամ (ներառյալ ավելացված արժեքի հարկը (ԱԱՀ):

**ԾԳՏ**-ն Պատվիրատուի կողմից սույն ընթացակարգի հրավերով հաստատված ԳՆԱՑՈՒՑԱԿԻ՝ ըստ առանձին տողերի համար սահմանված միավորի գինն է՝ ներառյալ ավելացված արժեքի հարկը (ԱԱՀ):

Ծ-ն կատարողական ակտերով ներկայացված՝ Պատվիրատուի կողմից սույն ընթացակարգի հրավերով հաստատված **ԳՆԱՅՈՒՑԱԿԻ** առանձին տողերի ծավալն է:

**ՎԳՏ-ն** Պատվիրատուի կողմից սույն ընթացակարգի հրավերով հաստատված **ԳՆԱՅՈՒՑԱԿԻ** առանձին տողերի դիմաց վճարվող գումարն է:

## 5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՄԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում աշխատանքի կատարման՝ սույն պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող աշխատանք կատարելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև աշխատանքը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են աշխատանքը կատարելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

## 6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված Համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս

պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձևերի բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.8 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե աշխատանքների կատարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.11 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է [www.procurement.am](http://www.procurement.am) հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.12 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.13 Պայմանագիրը և հավելվածները կազմված են 65 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.14 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

7.15 Պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Եթե պայմանագրի կատարման համար հատկացված ֆինանսական միջոցների չափը գերազանցում է գնումների բազային միավորի տասնապատիկը, ապա Պատվիրատուի կողմից համաձայնագիր կնքվի, եթե Կատարողի կողմից տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումները՝ նախատեսված ֆինանսական միջոցների չափով, փոխարինվում են բանկային երաշխիքով կամ կանխիկ փողով՝ հաշվի առնելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 32-րդ կետի 17-րդ ենթակետի «բ» պարբերության պահանջները: Ընդ որում, Կատարողը համաձայնագիրը կնքում, իսկ տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումների փոխարինման դեպքում նաև նոր ապահովումները Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՅԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**Պ Ա Տ Վ Ի Դ Ա Տ ՈՒ**


ՀՀ ԱՆ Քրեակատարողական ծառայություն  
Ք. Երևան, Արշակունյաց-63  
ՏՆ աշխատակազմի գործառնական վարչություն  
Հ/Հ 900011175016  
ՀՎՀՀ 02204739

ՔԿ ծառայություն  
Ա. Ղազարյան



**Կ Ա Տ Ա Ր Ո Ղ**

«ՍՈՒԲԱՇԻՆ» ՍՊԸ  
ՀՀ, ք. Երևան, Պարույր Սևակ 8  
Հ/Հ՝ 220533333161000  
ՀՎՀՀ՝ 01291683  
Տնօրեն՝ Ներսես Կոունկյան



ՀՀ դրամ

ՏԵՆՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆԱՍԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՏՈՒՅՑ\*

Աշխատանքի

հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ բստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	միավոր գինը/ՀՀ դրամ	Նախատեսվող ընդհանուր գինը /ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	կատարման	Ժամկետը**
1	45461100/502	<p>ՀՀ ԱՆ ՔԿԾ ծառայության կենտրոնական մարմնի և հիմնարկների շենքերի և շինությունների ընթացիկ վերանորոգման շինարարական աշխատանքների և օգտագործվող շինարարական նյութերի գնացուցակները ներկայացված են հավելված 1-ում: Գնման ընթացակարգի մասնակիցը շինարարական աշխատանքներն իրականացնում է սեփական միջոցներով՝ մեքենա - մեխանիզմներով, բանվորական ուժով, ինչպես նաև վերանորոգումներ և հարդարումներ իրականացնելու համար գանազան շինարարական իր գործիքներով:</p> <ul style="list-style-type: none"> <li>Մասնակիցը պետք է ունենա ՀՀ քաղաքաշինության կոմիտեի կողմից տրված համապատասխան լիցենզիաներ:</li> </ul> <p>Շինարարական աշխատանքների կատարման ժամանակ Կատարողը պետք է ունենա հետևյալ աշխատանքային ռեսուրսները</p> <ol style="list-style-type: none"> <li>1. հիբրոտեխնիկ - նվազագույնը 5 տարի շինարարական աշխատանքային փորձով,</li> <li>2. ճարտարագետ-շինարար - նվազագույնը 5 տարի շինարարական աշխատանքային փորձով,</li> <li>3. տեխնիկ (Լ-էկտրիկ, բարձրավոլտ հոսքագծերում աշխատելու թույլտվության վկայականով) - նվազագույնը 5 տարի աշխատանքային փորձով:</li> </ol> <p>Գնալի նա առաջարկը պետք է ներկայացնեն հավելված 1-ում նշված աշխատանքների և օգտագործվող նյութերի միավորի առավելագույն գների ընդհանուր հանրագումար արժեքով (գումա 1-ը և գումա 2-ը միասին, ներառյալ ԱԱՀ-ն):</p>	դրամ	69000000	69000000	1	ՀՀ ԱՆ ՔԿԾ ծառայության կենտրոնական մարմնի և	Պայմանագրի կնքման օրվանից մինչև 25.12.2022թ.

\* աշխատանքի կատարման վերջնամակետը չի կարող ավելի լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:

**Շենքերի, ՇՆՆԻԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆԹԱՑԻԿ ՎԵՐԱՆՈՂՈՂՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ  
(ՀԱՄԱՇՐՆԱՐԱՐԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ)  
ԿԱՏԱՐՄԱՆ ԵՎ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՆՅՈՒԹԵՐԻ ԳՆԱՑՈՒՑՄԱԿ  
Գլուխ 1.**

Գնման ենթակա աշխատանքների /առանց նյութերի/ գնացուցակը

Հ/հ	Հաստատված ծախսային ծրագրի անվանատողը	Հիմնա-վորումը	Աշխատանքի անվանումը	Չափան սիավորը	Միավորի առավելագույն արժեքը, ներառյալ ԱԱՀ-ն, հազար ՀՀ դրամ
1	2	3	4	5	6
<b>Աշխատանքներ /առանց նյութերի պատրաստվածքների և սարքավորումների/</b>					
1		Կ1-1671 11-15	Գրունտի մշակում էքսկավատորով, կողիցք, շերտի տարողությունը 0,5խմ, գրունտ 3 կարգ	100մ <sup>3</sup>	98,006
2		Կ1-1672 11-16	Գրունտի մշակում էքսկավատորով, կողիցք, շերտի տարողությունը 0,5խմ, գրունտ 4 կարգ	100մ <sup>3</sup>	127,733
3		Կ1-1673 11-17	Գրունտի մշակում էքսկավատորով, կողիցք, շերտի տարողությունը 0,5խմ, գրունտ 5 կարգ	100մ <sup>3</sup>	175,046
4	<b>Շենքերի, շինությունների ընթացիկ նորոգման</b>	Կ1-1696 22-16	Գրունտի մշակում էքսկավատորով, բարձելով ինքնաթափ մեքենաների վրա, շերտի տարողությունը 0,5 խմ, գրունտ 4 կարգ	100մ <sup>3</sup>	161,155
5	<b>աշխատանքներ (Համաշինարար</b>	Կ1-1604	Հողային աշխատանքների կատարում թափոնակույտում, ավտոտրանսպորտով տեղափոխման ժամանակ 2-3-րդ կարգի գրունտներ	100մ <sup>3</sup>	6,024
6	<b>ական աշխատանքներ)</b>	Կ1-1605	Հողային աշխատանքների կատարում թափոնակույտում, ավտոտրանսպորտով տեղափոխման ժամանակ 4-րդ կարգի գրունտ	100մ <sup>3</sup>	6,551

7	Կ1-1606	Հողային շինարարության կատարում թափոնալ ատում, ավտոտրանսպորտով տեղափոխման ժամանակ 5-6-րդ կարգի գրունտներ	100մ <sup>3</sup>	15,930
8	Կ1-1718 30-7	Գրունտի մշակում մինչև 228կվտ (310ձ.ու) հզորության բուլբոլերով, տեղափոխելով այն մինչև 10մ, 3 կարգի գրունտ	100մ <sup>3</sup>	17,789
9	Կ1-1719 30-8	Գրունտի մշակում մինչև 228կվտ (310ձ.ու) հզորության բուլբոլերով, տեղափոխելով այն մինչև 10մ, 4 կարգի գրունտ	100մ <sup>3</sup>	68,983
10	Կ1-1723 30-12	Ավելացնել ամեն հաջորդ 10մ բուլբոլերով տեղափոխելու համար /1:2 և 3-րդ կարգի գրունտներ/	100մ <sup>3</sup>	13,070
11	Կ1-1724 30-12	Ավելացնել ամեն հաջորդ 10մ բուլբոլերով տեղափոխելու համար /4-րդ կարգի գրունտ/	100մ <sup>3</sup>	28,321
12	Կ1-1727 31-3	Խրամուղիների և փոստրակների ետիցք մինչև 59կվտ (80ձ.ու) հզորության բուլբոլերով, տեղափոխելով մինչև 5մ, գրունտ 3 կարգ	100մ <sup>3</sup>	15,794
13	հաշվ. q=0,5	Ժայռագրունտի փխրեցում մեխանիզացված եղանակով, գրունտ 4ք-րդ և 5ք-րդ /կազմաքանդով/ կարգի	մ <sup>3</sup>	9,441
14	հաշվ. q=0,7	Ժայռագրունտի փխրեցում մեխանիզացված եղանակով, գրունտ 5-րդ կարգի	մ <sup>3</sup>	45,094
15	հաշվ q=0,8	Ժայռագրունտի փխրեցում մեխանիզացված եղանակով, գրունտ 6-րդ կարգի	մ <sup>3</sup>	15,103
16	հաշվ q=1,0	Ժայռագրունտի փխրեցում մեխանիզացված եղանակով, գրունտ 7-րդ կարգի	մ <sup>3</sup>	18,880
17	Կ1-961	Գրունտի մշակում ձեռքով խրամուղիների՝ մինչև 2մ խորությամբ, առանց ամրակապման, թեքություններով, և փոսերի փորում մինչև 1,5մ խորությամբ, 3 կարգ գրունտներում	մ <sup>3</sup>	3,039
18	Կ1-962	Գրունտի մշակում ձեռքով խրամուղիների՝ մինչև 2մ խորությամբ, առանց ամրակապման, թեքություններով, և փոսերի փորում մինչև 1,5մ խորությամբ, 4 կարգ գրունտներում	մ <sup>3</sup>	5,360
19	Կ1-965	Փոսերի փորում ձեռքով կանգնակների և սյուների համար մինչև 0,7մ խորությամբ 3 կարգ գրունտներում	մ <sup>3</sup>	5,664

20	Կ1-966	Փոսեր՝ քորում ձեռքով կանգնակների և սյունեղ շամար սինչև 0,7մ խորությամբ 4 կարգ գրունտներում	մ <sup>3</sup>	10,166
21	Կ1-967	Ետլիցք ձեռքով կոշտուկների փխրեցումով ու տոփանումով խրամուղիների, փոտրակների և փոսերի 1 կարգի գրունտներում	մ <sup>3</sup>	1,161
22	Կ1-968	Ետլիցք ձեռքով կոշտուկների փխրեցումով ու տոփանումով խրամուղիների, փոտրակների և փոսերի 2 կարգի գրունտներում	մ <sup>3</sup>	1,271
23	Կ1-969	Ետլիցք ձեռքով կոշտուկների փխրեցումով ու տոփանումով խրամուղիների, փոտրակների և փոսերի 3 կարգի գրունտներում	մ <sup>3</sup>	1,547
24	Կ27-33	Ասֆալտբետոնե ծածկույթների քանդում	100մ <sup>3</sup>	583,994
25	Կ27-124 կիրառ գա=0; գլ= 0,237	Ասֆալտբետոնե ծածկույթների ակոսահատում	100մ	88,091
26	Կ27-30	Սալարկների քանդում	մ <sup>3</sup>	2,672
27	Կ27-31	Խճային ծածկույթների քանդում	100մ <sup>3</sup>	76,050
28	Կ27-32	Հանքածյութով տոգրված խճային ծածկույթների քանդում	100մ <sup>3</sup>	102,525
29	Կ27-34	Ցեմենտ-բետոնե ճանապարհային ծածկույթների քանդում	100մ <sup>3</sup>	357,308
30	Կ46-78	Ե/բետոնե հիմքերի քանդում	մ <sup>3</sup>	112,158
31	Կ46-79	Քարե պատերի և միջնորումների քանդում	մ <sup>3</sup>	17,837
32	Կ46-85	Միաշերտ, երկշերտ վահանակային, փայտե, գիպսակարտոնե միջնորումների քանդում	100մ <sup>2</sup>	73,050
33	Կ46-94	Կախովի առաստաղների քանդում իր հիմնակախիքով	100մ <sup>2</sup>	96,719
34	Կ46-96	Տանիքի ծածկույթի քանդում թերթային պողպատից	100մ <sup>2</sup>	13,871
35	12-288-1 9-5	Տանիքի ջրամեկուսացում խարամով	մ <sup>3</sup>	2,925
36	10-70 11-1	Տանիքի փայտյա կարկասի կառուցում	մ <sup>3</sup>	18,850
37	10-70 11-2	Տանիքի մետաղական կարկասի կառուցում, յուղաներկում	մ <sup>2</sup>	7,500
38	2ուկա	Տանիքի աքսեսուարների տեղադրում	գճմ	7,020
39	12-268 6-2	Տանիքածածքույթի կառուցում ավիքավոր ցինկապատ մետաղաթիթերով, 0,5 մմ հաստությամբ	100մ <sup>2</sup>	132,990
40	Կ46-100	Բետոնե հատակների քանդում	մ <sup>3</sup>	17,661

41	Կ46-122 կիրառ	Պատուհանների, բացվածքների փայտյա, մետաղական և պլաստիկ փայտամանազուգեղով պլաստիկ և քարե փայտամանազուգեղով	100մ <sup>2</sup>	289,514
42	Կ46-123 կիրառ	Պատուհանների, բացվածքների փայտյա, մետաղական և պլաստիկ փայտամանազուգեղով	100մ <sup>2</sup>	266,861
43	Կ46-124 կիրառ	Դռների, բացվածքների փայտյա, մետաղական և պլաստիկ փայտամանազուգեղով	100մ <sup>2</sup>	170,724
44	13-5 կիրառ	Հատակների և պատերի կերամիկական սալիկների երեսապատման քանդում	100մ <sup>2</sup>	82,876
45	Կ46-149	Երկհարկանի, կարկասային շենքերի վերգետնյա մասի քանդում մինչև 50 000 խմ ծավալով	100մ <sup>3</sup>	63,814
46	Կ46-(156-158) կիրառ	10-39-ին տրամագծով, 700-մմ խորությամբ ուղղաձիգ անցքերի գալիկոնում կառուցատարրերում ավաստային օղակն գալիկոններով, սառեցնող հեղուկի օգտագործմամբ	100 հատ	109,850
47	Կ46-(159-163) կիրառ	40-69-ին տրամագծով, 700-մմ խորությամբ ուղղաձիգ անցքերի գալիկոնում ե/բետոնե կառուցատարրերում ավաստային օղակն գալիկոններով, սառեցնող հեղուկի օգտագործմամբ	100 հատ	132,080
48	Կ46-(164-167) կիրառ	70-109-ին տրամագծով, 700-մմ խորությամբ ուղղաձիգ անցքերի գալիկոնում կառուցատարրերում ավաստային օղակն գալիկոններով, սառեցնող հեղուկի օգտագործմամբ	100 հատ	174,850
49	Կ46-(168-169) կիրառ	110-139-ին տրամագծով, 700-մմ խորությամբ ուղղաձիգ անցքերի գալիկոնում կառուցատարրերում ավաստային օղակն գալիկոններով, սառեցնող հեղուկի օգտագործմամբ	100 հատ	204,822
50	Կ46-(170-171) կիրառ	140-160-ին տրամագծով, 700-մմ խորությամբ ուղղաձիգ անցքերի գալիկոնում կառուցատարրերում ավաստային օղակն գալիկոններով, սառեցնող հեղուկի օգտագործմամբ	100 հատ	207,675
51	2ուկա	50-160-ին տրամագծով, 700-մմ խորությամբ ուղղաձիգ անցքերի գալիկոնում կառուցատարրերում ավաստային օղակն գալիկոններով, սառեցնող հեղուկի օգտագործմամբ, հատուտ էլեկտրական գործիքով	100 հատ	1 500,000

52	Կ46-(188-190) կիրառ	20-39 մե Արամագծով, 700 մմ խորությամբ հորիզոն. շիկան անցքերի գայլիկոնում և/բետոնե կառուցատարրերում ավաստային օղաձև գայլիկոններով, սառեցնող հեղուկի օգտագործմամբ	100 հատ	150,475
53	Կ46-(191-195) կիրառ	40-160 մմ տրամագծով, 700 մմ խորությամբ հորիզոնական անցքերի գայլիկոնում կառուցատարրերում ավաստային օղաձև գայլիկոններով, սառեցնող հեղուկի օգտագործմամբ	100 հատ	188,681
54	շուկա	50-160 մմ տրամագծով, 700 մմ խորությամբ հորիզոնական անցքերի գայլիկոնում կառուցատարրերում ավաստային օղաձև գայլիկոններով, սառեցնող հեղուկի օգտագործմամբ, հատուտ էլեկտրական գործիքով	100 հատ	1 200,000
55	Կ46-35	Սվաղի հեռացում պատերից և առաստաղներից	100մ <sup>2</sup>	25,771
56	Կ46-37	Սվաղի հեռացում սյուներից և որմնասյուներից	100մ <sup>2</sup>	35,715
57	Կ46-38	Բացվածքների իրականացում խամբարաբետոնե կառուցատարրերում	մ <sup>3</sup>	24,508
58	Կ46-40	Բացվածքների իրականացում քարե կառուցատարրերում	մ <sup>3</sup>	29,238
59	Կ46-43	Բնիկների բացում քարե պատերում մինչև 200*200 մմ չափսի	հատ	1,222
60	Կ46-44	Բնիկների բացում քարե պատերում 200*200 մմ ավել	հատ	2,050
61	Կ9-123 կիրառ գ=0,6; 0,7	Պողպատե կառուցատարրերի ապամոնտաժում	տն	60,030
62	շուկա	Մամբարձիչ մեքենայի (вмятка), կոունկի ծառայություն	ժամ	16,413
63	23-77, 23-226 գն.3	Ապամոնտաժված նյութերի, շին աղբի և ավելացված բնահողի կուտակում, բարձում ձեռքով ինքնաթափ մեքենաների վրա	տն	7,686
64	Կ1-1696	Շին աղբի բարձում էքսկավատորով, ինքնաթափ մեքենաների վրա, շերեփի տարողությունը 0,5 խմ,	մ <sup>3</sup>	2,925
65	գն.3	Ապամոնտաժված նյութերի, շին աղբի և ավելացված բնահողի տեղափոխում, մինչև 1 կմ	տն	3,284
66	գն.3	Ավելացնել լրացուցիչ 1 կմ տեղափոխման համար (միավորի արժեքը x հեռավորության երկարության հետ; Մ/արժեքx(n-1), որտեղ n-ը կուտակույտի բարձման տեղից մինչև թափոնատեղը ընկած տարածության երկարությունն է կմ-ով)	տն	0,226

67	Գրունու խտացում խճով, կոպիճով և գլաքարեր /գրունտի համահարթեցում, ջրցանում; խճի փռում; համահարթեցում; ներսնդնում; ծախսը խիճ/կոպիճ/ 40-70մմ չափաբաժնի- 4,08խմ/	100մ <sup>2</sup>	14,355
68	Նախապատրաստական շերտի պատրաստում ավազից, առանց նյութի արժեքի /գրունտի համահարթեցում, ջրցանում; ավազի փռում; հարթեցում; խտացում; ծախսը - 1,12խմ/	մ <sup>3</sup>	4,475
69	Նախապատրաստական շերտի պատրաստում խարամից, առանց նյութի արժեքի /գրունտի համահարթեցում, ջրցանում; խարամի փռում; հարթեցում; խտացում; ծախսը - 1,25խմ/	մ <sup>3</sup>	4,007
70	Նախապատրաստական շերտի պատրաստում խիճ /գլաքար, կոպիճ/, առանց նյութերի արժեքի խառնուրդով /գրունտի համահարթեցում, ջրցանում; մանրախճի և քարի փշրանքի փռում խճի վրա և խտացում; ծախսը խիճ/գլաքար, կոպիճ/ 20-40մմ չափաբաժնի - 0,97խմ, մանրախիճ - 0,09խմ; քարե փշրանք-0,18խմ/	մ <sup>3</sup>	9,838
71	Նախապատրաստական շերտի պատրաստում Վ7,5 դասի բետոնից առանց բետոնի արժեքի /խտացում; ծախսը՝ ծանր բետոն - 1,02խմ/	մ <sup>3</sup>	4,475
72	Բետոնե ժապավենային հիմքերի իրականացում խտացումով, առանց նյութերի արժեքի /խտացում; բետոն 1,02խմ; ծախսը՝ փայտ 0,0039խմ; կաղապարամած 0,803քմ/	մ <sup>3</sup>	7,731
73	Խամքարաբետոնե հիմքերի իրականացում, առանց նյութերի արժեքի /ծախսը՝ բետոն 0,71խմ; փայտ 0,0101խմ; խամքար 0,44խմ; կաղապարամած 0,918քմ/	մ <sup>3</sup>	7,939
74	Բետոնե հիմնային տափակ սալերի /հարթակների/ իրականացում խտացումով, առանց նյութերի արժեքի /ծախսը՝ բետոն 1,02խմ; փայտ 0,008խմ; կաղապարամած 0,0754քմ/	մ <sup>3</sup>	2,978
75	Բետոնե հիմքերի իրականացում խտացումով, սարքավորումների տակ առանց արժեքի / ծախսը՝ բետոն 1,02խմ; փայտ 0,036խմ; կաղապարամած 1.16քմ/	մ <sup>3</sup>	46,025

76	Կ6-91	Խամբու շքերտոնն հենապատերի իրականացում՝ խոսացումով, առանց նյութերի արժեքի /ծախսը՝ բետոն 0,71խմ; հեղույս մանեկ 0,9կգ; խամբար 0,44խմ; փայտ 0,0165խմ; կաղապարամած 0,717քմ/	լ <sup>3</sup>	7,025
77	ՀՆ-ԼԺ6-1-5 կիրառ	Ամրանային պողպատից շինվածքների, ցանցերի, ներդիր էլեմենտների պատրաստում և տեղադրում բետոնն կառուցատարների կաղապարամածների մեջ առանց նյութերի արժեքի (ծախսը՝ ամրան, ցանց 1,0տ - 1,01; 1,02տ; պողպատն ամրակապ 1,0տ- 4կգ)	տ	78,367
78	Կ6-168	Ե/բետոնն գոտիների իրականացում խոսացումով, առանց բետոնի և ամրանի արժեքի /բետոն 1,015 խմ; ծախսը՝ բետոն 1,015 խմ; էլեկտրող 2,5կգ; փայտ 0,0145խմ; կաղապարամած 1,4քմ/	լ <sup>3</sup>	18,374
79	Կ6-170	Ե/բետոնն բարավորների իրականացում խոսացումով, առանց բետոնի և ամրանի արժեքի /ծախսը՝ բետոն 1,015 խմ; էլեկտրող 2,3կգ; փայտ 0,0378խմ; կաղապարամած 2,9քմ/	լ <sup>3</sup>	26,770
80	Կ6-173	Ե/բետոնն անհեծան ծածկերի իրականացում խոսացումով, առանց բետոնի և ամրանի արժեքի /ծախսը՝ բետոն 1,015խմ; փայտ 0,0366խմ; կաղապարամած 1,37քմ/	լ <sup>3</sup>	16,411
81	Կ6-177	Կողավոր ե/բետոնն ծածկերի իրականացում խոսացումով, առանց բետոնի և ամրանի արժեքի ծախսը /բետոն 1,015 խմ; էլեկտրող 2,5կգ; փայտ 0,0589 խմ; կաղապարամած 2,29քմ/	լ <sup>3</sup>	27,689
82	Կ27-86 կիրառ	Բետոնն և բազալտե եզրաքարերի (մայթեզերի) տեղադրում բետոնն Վ15 դասի հիմքի վրա; հողային արկղի պատրաստում հիմքի համար, բետոնն հիմքի իրականացում խոսացումով, կաղապարամածի տեղադրում և ապամոնտաժում, եզրաքարերի տեղադրում հարմարատաշումով, կարանների լցում գծամշակումով, առանց նյութերի արժեքի /ծախսը՝ եզրաքար 1գծմ; բետոն 0,04*-0,06խմ; g/w շաղախ 0,0006խմ/	մ	1,668

83	Կ15-77 կիրառ	Պատե՛ր աստիճանների և աստիճանաճակատն՛երի երեսապատում բազալտե, տուֆե, անդեզիտե, ֆերոլիտե, գրանիտե և մարմարե սալերով, խարսխավորումով կամ առանց խարսխավորմամբ, 1քմ-ում մինչև 6 հատ /ծախսը՝ երեսապատման սալեր 1,01 քմ, պողպատե Փ1,8-3մմ ամրակապեր փաստացի ծախսով կգ; ց/ա շաղախ 0,02խմ/	մ <sup>2</sup>	10,540
84	Կ27-19	Նախապատրաստական և հարթեցնող շերտի իրականացում ավազից առանց նյութերի արժեքի, ներքնաշերտի համահարթեցում և տոփանում, ավազի ցրում-հարթեցում, գլորնում՝ պնեկմատիկ դողերով 18,0տ և 25,0տ և ջրում /ծախսը ավազ 1,1խմ, ջուր 0,05խմ/	մ <sup>3</sup>	1,161
85	Կ27-22-1	Նախապատրաստական և հարթեցնող շերտի իրականացում խճով, առանց նյութերի արժեքի, ներքնաշերտի համահարթեցում, տոփանում, խճի ցրում հարթեցում, գլորնում՝ հարթ թմբուկներով 6,5տ և 10,0տ; պնեկմատիկ դողերով 18,0տ և ջրում /ծախսը խիճ 1,26խմ, ջուր 0,07խմ/	մ <sup>3</sup>	3,753
86	Կ27-164	Ասֆալտբետոնե տաք խառնուրդներից մեկ շերտով ծածկույթի իրականացում 4սմ հաստ., առանց ասֆալտբետոնի արժեքի (հիմնատակի մաքրում, ա/բ խառնուրդի փռում ասֆալտափոշիներով, եզրերի կտրատումով, տոփանում գլորնման համար անմատչելի տեղերում, գլորնում (6,5 և 10տ) նմուշահատների արտահատում և տեղերի լցափակում) /ծախսը՝ ըստ ա/բետոնի տիպի և մակնիշի, խտացված վիճակում 9,11-9,74տն/	100մ <sup>2</sup>	27,258
87	Կ27-29-1, Կ27-29-2	Հարթեցնող շերտի իրականացում ա/բետոնե խառնուրդներով առանց ասֆալտափոշիների, առանց ասֆալտբետոնի արժեքի (հիմնատակի մաքրում, ա/բ խառնուրդի փռում, եզրերի կտրատումով, տոփանում գլորնման համար անմատչելի տեղերում, գլորնում 6,5և 10տ, նմուշահատների արտահատում և տեղերի լցափակում) /ծախսը՝ ա/բետոն՝ 1,0տ-1,01տ/	տ	3,315
88	Կ27-251	Ճանապարհային հանքաձյուրի լցարաշխում, առանց հանքաձյուրի/բիտումային էմուլսիա/ արժեքի / ծախսը՝ 1,03տ/	տ	9,984

89	Կ6-309	Օսնր 5; 12,5;15;20;22,5 դասի բետոնի պատրաստում տեղում առանց բաղադրիչների արժեքի /ճախար խիճ 0,8խմ; ջուր 0,21խմ, ավազ 0,58;0,57;0,53;0,5;0,47 խմ; ցեմենտ Մ400 դասի /CEM-II/A-P, 42,5N/ 214;235;286;332; 382 կգ/	մ <sup>3</sup>	7,003
90	Կ6-318 կիրառ	Թեթև Կ5;7,5;12,5 դասի բետոնի պատրաստում տեղում առանց բաղադրիչների արժեքի /ճախար խիճ (ճավալային կշիռը մինչև 1500կգ/խմ) 0,89խմ; ջուր 0,32խմ, ավազ (ճավալային կշիռը մինչև 1500կգ/խմ) 0,54 խմ; ցեմենտ Մ400 դասի /CEM-II/A-P, 42,5N/255;286;317 կգ/	մ <sup>3</sup>	6,448
91	Կ6-336 կիրառ	Ցեմենտային/ցեմենտակրային/ շաղախի Կ7,5; 12,5;15 դասի պատրաստում տեղում առանց բաղադրիչների արժեքի /ճախար ավազ 1,21; 1,16; 1,12 խմ; ցեմենտ Մ400 դասի/ 304;416;499 կգ, ջուր 0,32խմ,/	մ <sup>3</sup>	5,775
92	Կ8-165 17-1	Միջնորմներ գիպսե սալերից, մեկշերտ, մինչև 100մմ հաստ, առանց նյութերի արժեքի /ճախար փայտ 0,1խմ; գիպս-ալիբաստր 0,57տ; կռվածք 8կգ; ամրան մինչև Φ10մմ 0,013տ, տոլ 6քմ; ավազ 0,6խմ; սալեր 10սմ հաստ. 0,91քմ/	100մ <sup>2</sup>	186,723
93	Կ8-140 15-1	Պատերի շար թեթև բետոնե քարերից/բլոկներից/ կարանների գծամշակումով, առանց նյութերի արժեքի /ճախար բետոնե բլոկ 0,92խմ, ց/ա շաղախ 0,11խմ/	մ <sup>3</sup>	9,342
94	Կ8-150	Թեթև բետոնե բլոկների դատարկությունների լցում թեթև լցանյութով, 1խմ շարի համար մինչև 0,25խմ լցանյութ, առանց լցանյութի արժեքի	մ <sup>3</sup>	18,048
95	Կ8-59 7-3	Պատերի և այլ կառուցասարքերի շարվածքի ամրանավորում մետաղական ցանցերով, ամրաններով և մետաղալարերով, առանց նյութերի արժեքի	տ	83,061
96	Կ8-60 7-4	Կառուցասարքերի ամրակցում պողպատե ամրակապերով	տ	67,778
97	Կ8-163 16-7	Պատերի և սյուների մաքուր շարվածք կանոնավոր ձևի տուֆ քարերից, հարկի բարձրությունը մինչև 4մ, առանց նյութերի արժեքի /ճախար տուֆե քար 0,92խմ, ց/ա շաղախ 0,18խմ/	մ <sup>3</sup>	12,324

98	Կ34-343 կիրառ	Միջնորդների հիմնականախթի երեսապատում, փայտատաշեղային, փայտաթելքային, գիպաստովարաթղթե, նրբատախտակե, սալերով մեկ կողմից, մեկ շերտ /առանց նյութերի արժեքի/	մ <sup>2</sup>	1,401
99	Կ34-322 կիրառ	Կախովի առատաղնեղների փայտե, մետաղական հիմնականախթի պատրաստում /առանց նյութի արժեքի/	մ <sup>2</sup>	4,060
100	Կ34-354 կիրառ	Կախովի առատաղնեղների հիմնականախթի երեսապատում պլամանե, փայտատաշեղային, փայտաթելքային, գիպաստովարաթղթե, նրբատախտակե, սալերով մեկ շերտ /առանց նյութի արժեքի/	մ <sup>2</sup>	1,788
101	Կ34-343 գ=0,7 կիրառ	Պատերի հիմնականախթի երեսապատում պլամանե, փայտատաշեղային, փայտաթելքային, գիպաստովարաթղթե, նրբատախտակե սալերով մեկ շերտ /առանց նյութի արժեքի/	մ <sup>2</sup>	0,982
102	Կ9-232 կիրառ. հաշվ.	Պողպատե կառուցատարրերի պատրաստում և մոնտաժում /առանց նյութերի արժեքի/	տ	165,181
103	Կ9-125 կիրառ. հաշվ. գ=2	Մետաղական դռան, դարպասի, ճաղվանդակի պատրաստում իր շրջանակով և պարագաներով էլ. եռակցման երանակով /առանց նյութերի արժեքի/	մ <sup>2</sup>	42.640
104	Կ9-125 կիրառ. հաշվ. գ=3	Մետաղական ջրագագատար խողովակների գազային եռակցում համապատասխան պարագաներով /առանց նյութերի արժեքի/	կետ	11,440
105	Կ9-240 կիրառ	Մետաղական դռան տեղադրում /առանց նյութի արժեքի/	մ <sup>2</sup>	4,550
106	Շուկա	Մետաղակաղ դռան վրա հատուկ բանտային կողպեքի ապամոնտաժում և տեղադրում համապատասխան պարագաներով /առանց նյութի արժեքի/	հատ	5,850
107	Կ10-114 կիրառ	Դռների տեղադրում միջնորդներում և պատերում փայտե և երեսապատված փայտանյութերով, այլումինե, մետաղապլաստե /առանց դռան իր շրջանակով, արժեքի/	մ <sup>2</sup>	5,200
108	Կ10-113 կիրառ	Միջնորդների/վիտրաժ/ տեղադրում այլումինե, մետաղապլաստե /առանց միջնորդի պատրաստվածքի արժեքի/	մ <sup>2</sup>	3,006
109	նոթ.62	Պարակայների տեղադրում /առանց արժեքի/	մ	0,111

110	Կ10-74 Կ10-75 կիրառ	Պատույնների տեղադրում փայտե, այլումինե, )տաղապլաստե /առանց պատուհանի՝ իր շրջանակով, արժեքի/	մ <sup>2</sup>	5,031
111	շուկա	Պատուհանների վերանորոգում /առանց նյութի արժեքի/	մ <sup>2</sup>	12,365
112	շուկա	Դռների վերանորոգում /առանց նյութի արժեքի/	մ <sup>2</sup>	26,487
113	Կ10-102 Կ10-103	Պատուհանագոգերի տեղադրում փայտե, պլաստանե, այլումինե, առանց նյութերի արժեքի /ծախսը՝ պատուհանագոգ 1,05 զճմ, ցեմենտե շաղախ 0,005խմ; գիպս-ալիբաստր 4,3կգ/	մ	1,521
114	Կ11-55;57; 67;69; 75; 79; 80 հաշվ.	Հարթեցնող շերտի, բետոնե ծածկույթների պատրաստում ցեմենտային շաղախով, տարբեր դասի և տեսակի բետոններով՝ մինչև 100մմ հաստ. առանց նյութերի արժեքի /խտացումով, ծախս ցեմենտե շաղախ/բետոն/ (ծախսը՝ 11խմ)	100մ <sup>2</sup>	222,976
115	Կ11-73	Բետոնե և ցեմենտային ծածկույթների լրացուցիչ ամրացում ցեմենտով առանց ցեմենտի արժեքի /ծախս՝ ցեմենտ 0,06տ/	100մ <sup>2</sup>	27,613
116	Կ15-92 կիրառ	Հատակների և պատերի ծածկույթի պատրաստում արհեստական երեսապատման սալիկներից սալիկի սուսիձով, ներառյալ շրիշակները (առանց նյութերի արժեքի) /ծախս՝ սալիկ 102Քմ; սալիկի սուսինձ 450կգ/	100մ <sup>2</sup>	419,402
117	Կ11-16 կիրառ	Ջրամեկուսիչ շերտի իրականացում, 1 շերտ գլանափաթեթային /իզոզամ, ծախսը՝ 1Քմ-1,12Քմ/, առանց նյութերի արժեքի	100մ <sup>2</sup>	123,767
118	Կ11-17 կիրառ	Ամեն հաջորդ ջրամեկուսիչ շերտի համար ավելացնել գլանափաթեթային /իզոզամ, ծախսը՝ 1Քմ-1,12Քմ/, առանց նյութերի արժեքի	100մ <sup>2</sup>	62,768
119	Կ11-47 կիրառ	Ջրամեկուսիչ շերտի իրականացում մածկումով /լցահարթեցումով/ 1շերտ 2մմ հաստ., առանց նյութի արժեքի	100մ <sup>2</sup>	74,757
120	Կ11-48 կիրառ	Ամեն հաջորդ ջրամեկուսիչ մածկումով /լցահարթեցումով/ շերտի համար ավելացնել, առանց նյութի արժեքի	100մ <sup>2</sup>	20,816
121	ՀՆ-ԼԺ 11-3	Ծածկույթի իրականացում լամինացված մանրատախտակով պատրաստի հիմնատակի վրա, ձայնամեկուսիչ միջնաշերտի իրականացումը /ծախս՝ 104Քմ/ առանց նյութերի արժեքի	100մ <sup>2</sup>	123,178

122	Շուկա	Լալի՛ն րե ներկառուցված պահարանի կառուց ներառյալ լամինատե վահան, կախիչներ, ծխնիններ, շարժաբեք մեխանիզմներ, բռնակներ, դարակաշարի ամրակներ և այլն:	100մ <sup>2</sup>	136,830
123	Կ11-273	Փայտե, լամինացվաց և պոլիմերային շրիշակների տեղադրում /առանց արժեքի/	100մ	23,284
124	Կ11-63 կիրառ	Տափազերանների տեղադրում ծածկի սալերի կամ բետոնե հատակների վրա, հականեխիչով մշակված /առանց նյութի արժեքի/	մ <sup>2</sup>	0,438
125	Կ11-184,185,186	Ծածկույթի պատրաստում տախտակե, հականեխիչով մշակված և հղկված /առանց նյութերի արժեքի/	մ <sup>2</sup>	1,504
126	Կ11-187	Ծածկույթի պատրաստում փայտանյութե սալերով /առանց նյութերի արժեքի/	մ <sup>2</sup>	0,742
127	Կ15-285	Պատերի մակերևույթների քերթատում	100մ <sup>2</sup>	55,251
128	Կ15-279	Ներքևի լուսամուտատակերի և դժվարամատչելի տեղերի սվարում /առանց շաղախի արժեքի; ծախս՝ շաղախ 3,5խմ/	100մ <sup>2</sup>	517,110
129	Կ15-212	Ճակատների, 200մմ-ից ավել լայնության հարթ շեփույթունների բարձրորակ սվարում շաղախով /առանց շաղախի արժեքի; ծախս՝ շաղախ 1,06խմ/	100մ	127,205
130	Կ15-275-1	Պատերի մակերևույթների համատարած հարթեցում (մեկշերտանի սվաղ գաջով կամ գիպսոնիտով) /առանց նյութի արժեքի; ծախս՝ 1,72տ/	100մ <sup>2</sup>	99,901
131	Կ15-242-1	Պատերի, սյուների և որմնասյուների սվաղ գաջով կամ գիպսոնիտով /առանց նյութի արժեքի; ծախս՝ գաջ 2,17տ/	100մ <sup>2</sup>	180,665
132	Կ15-277-1	Պատուհանների և դռների տափակ շեփույթունների սվաղ գաջով կամ գիպսոնիտով /առանց գաջի արժեքի; ծախս՝ գաջ 3,07տ/	100մ <sup>2</sup>	457,860
133	Կ15-286	Առաստաղների մակերևույթների քերթատում	100մ <sup>2</sup>	66,301
134	Կ15-247-1	Առաստաղների բետոնե մակերևույթների սվաղ գաջով կամ գիպսոնիտով /առանց գաջի արժեքի; ծախս՝ գաջ 2,65տ/	100մ <sup>2</sup>	262,384

135	Կ15-293-1	Աստիճակային և հարթակների բետոնե մակերեսների սկզբնական գիպտոնիտով, սանդղահեծանների և հեծանների հարդարումով, ձգաձողով/առանց գաջի արժեքի: ծախս՝ գաջ 6,24տ/	100մ <sup>2</sup>	637,199
136	Կ15-660	Պատերի ներկում ջրաձուլիչ: լատեքսային, ճակատային ներկով սվաղի վրայով/առանց նյութերի արժեքի, ծախսը ներկ 36կգ: ձեփամածիկ 51կգ/	100մ <sup>2</sup>	67,900
137	Կ15-661	Առաստաղների ներկում ջրաձուլիչ, լատեքսային, ճակատային ներկով սվաղի վրայով/առանց նյութերի արժեքի: ծախսը ներկ 36կգ: ձեփամածիկ 55կգ/	100մ <sup>2</sup>	84,377
138	Կ15-561	Պատերի յուղաներկում /առանց նյութերի արժեքի: ծախսը յուղաներկ 25,8կգ, օլիֆ 9,1կգ, մածիկ 38կգ/	100մ <sup>2</sup>	90,151
139	Կ15-562	Առաստաղների յուղաներկում/առանց նյութերի արժեքի: ծախսը յուղաներկ 29,8կգ, օլիֆ 10,0կգ, մածիկ 41կգ/	100մ <sup>2</sup>	112,406
140	Կ15-563	Հատակների յուղաներկում/առանց նյութերի արժեքի: ծախսը յուղաներկ 25,0կգ, օլիֆ 11,6կգ, մածիկ 54կգ/	100մ <sup>2</sup>	80,430
141	Կ15-564	Բարելավված յուղաներկում փայտի վրայից/առանց նյութերի արժեքի: ծախսը յուղաներկ 25,8կգ, օլիֆ 9,1կգ, մածիկ 38կգ/	100մ <sup>2</sup>	90,151
142	14-323 գ=0,9 կիրառ	Փայտե կամ մանրահատակե ծածկույթի հղկատաշում	100մ <sup>2</sup>	143,459
143	14-324 14-323 գ=0,5	Փայտե կամ մանրահատակե ծածկույթի 2 շերտ լաքապատում, մածկումով/առանց նյութի արժեքի, ծախսը մածիկ հատակի 25կգ/	100մ <sup>2</sup>	69,479
144	Կ15-608	Հատակների ծածկում յուղաներկով, մածկված, նախաներկված կամ ներկված մակերևույթի վրայից, երկու անգամ/առանց լաքի արժեքի: ծախսը լաք 20,8կգ/	100մ <sup>2</sup>	20,443
145	Կ15-612	Մետաղական մեծ մակերևույթների հղկում և ներկում (բացի տանիքածածկերի) երկու անգամ/առանց նյութերի արժեքի: ծախսը ներկ 27,3կգ, օլիֆ կամ լուծիչ 3,2կգ/	100մ <sup>2</sup>	56,212

146	Կ15-613	Պողոս Մեծանների, 50մմ-ից ավել տրամագծով խողովակների և այլն յուղաներկում երկու անգամ /առանց նյութերի արժեքի; ծախսը ներկ 24,6կգ, օլիֆ կամ լուծիչ 2,7կգ/	100մ <sup>2</sup>	59,255
